

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Ճանապարհային ոստիկանության վարչական իրավախախտման վերաբերյալ գործով
13.10.2020թ. կայացված ԱՖ502127 որոշումն անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց
բավարարման թողնելու մասին

<< 30 >> 10 2020թ. 7-13- 13763

ք.Երևան

Ճանապարհային ոստիկանության պետ, ոստիկանության գնդապետ Ե.Կարապետյանս,
վերանայելով Բաբկեն Պողոսյանի ՄԴ/145801-20 դիմումի քննարկման արդյունքում ստեղծված
նյութերը՝

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի

Երևան քաղաքի Մալաթիայի փողոցի 26 տան բնակիչ Բաբկեն Պողոսյանը դիմումով խնդրել է
բեկանել Ճանապարհային ոստիկանության վարչական իրավախախտման վերաբերյալ գործով
13.10.2020թ. կայացված ԱՖ502127 որոշումը՝ նշելով, որ համաձայն չէ կայացված որոշման հետ:
Միաժամանակ հեռախոսակապի միջոցով հայտնել է, որ դիմումին ավելացնելու ոչինչ չունի և
համաձայնվել է, որ դիմումը քննարկվի առանց իր մասնակցության:

Դիմումի քննարկման արդյունքում պարզվել է, որ Ճանապարհային ոստիկանության
վարչական իրավախախտման վերաբերյալ գործով 13.10.2020թ. կայացված ԱՖ502127 որոշումը
ենթակա է կատարման հետևյալ պատճառաբանությամբ.

<<Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության
պարտադիր ապահովագրության մասին>> 5-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր
անձ պետք է մշտապես ունենա սեփականության իրավունքով իրեն պատկանող (ֆինանսական
վարձակալության (լիզինգի) պայմանագրով իրեն տրամադրված) և Հայաստանի
Հանրապետությունում հաշվառված յուրաքանչյուր ավտոտրանսպորտային միջոցի համար կնքված
և գործող ԱՊՊԱ պայմանագիր: **Արգելվում է ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային
ճանապարհներով ավտոտրանսպորտային միջոցի վարումը, եթե դրա համար առկա չէ այն
վարելու պահին գործող ԱՊՊԱ պայմանագիր:**

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 129.2-րդ հոդվածի 2-րդ մասի
համաձայն՝ առանց տվյալ տրանսպորտային միջոցի համար կնքված ավտոտրանսպորտային
միջոցի օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության գործող
պայմանագիր ունենալու՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ընդհանուր օգտագործման
ավտոմոբիլային ճանապարհներով տրանսպորտային միջոցը վարելը՝ առաջացնում է տուգանքի
նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ 13.10.2020թ. ժամը՝ 09:55-ին Մասիս քաղաքի
Արարատյան փողոցում քաղաքացի Բաբեն Պողոսյանի վարած <<VOLKSWAGEN>> մակնիշի
36SA637 հաշվառման համարանիշի տրանսպորտային միջոցը ենթարկվել է
ճանապարհատրանսպորտային պատահարի: Վթարի նյութերը նախապատրաստելիս
Ճանապարհային ոստիկանության ՃՊԾ 2-րդ սպայական գումարտակի 1-ին սպայական վաշտի 2-
րդ սպայական դասակի տեսուչ, ոստիկանության ավագ լեյտենանտ Հ.Հովհաննիսյանը պարզել է,
որ վարորդը ավտոմոբիլը վարել է առանց գործող ԱՊՊԱ պայմանագիր ունենալու, նշված փաստը
հիմնավորվել է նաև ԱՊՊԱ բյուրոյի հայտնած տեղեկատվությամբ, ինչի հիման վրա կազմվել է

2

վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն և Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 129.2-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, կայացվել է ԱՖ502127 որոշումը՝ վերջինիս 100.000 ՀՀ դրամի չափով տուգանելու մասին:

Ճանապարհային ոստիկանության ծառայողների կողմից տրված պարզաբանման համաձայն՝ քաղաքացի Բաբկեն Պողոսյանի վարած «VOLKSWAGEN» մակնիշի 36SA637 հաշվառման համարանիշի ավտոմոբիլը Մասիս քաղաքի Արարատյան փողոցում ենթարկվել է ճանապարհատրանսպորտային պատահարի: Վթարի նյութերը նախապատրաստելիս պարզվել է, որ վարորդը ավտոմոբիլը վարել է առանց գործող ԱՊՊԱ պայմանագիր ունենալու, ինչի կապակցությամբ Ճանապարհային ոստիկանության ՃՊԾ 2-րդ սպայական գումարտակի 1-ին սպայական վաշտի 2-րդ սպայական դասակի տեսուչ, ոստիկանության ավագ լեյտենանտ Հ.Հովհաննիսյանի կողմից կազմվել է համապատասխան արձանագրություն և կայացվել ԱՖ502127 որոշումը: Միաժամանակ ոստիկանության ծառայողները հայտնել են, որ իրենց և վարորդի միջև ծառայողական բնույթի խոսակցություններից բացի այլ խոսակցություններ չեն եղել:

Ինչ վերաբերում է դիմումատուի կողմից ներկայացված տեղեկանքին, ապա այն ԱՖ502127 որոշումը բեկանելու հիմք չի կարող հանդիսանալ, քանի որ Հայաստանի ավտոապահովագրողների բյուրոյի հայտնած տեղեկատվությամբ SO406125 վկայագիրը ուժի մեջ է մտել 13.10.2020թ-ին ժամը 10:06-ին ինչը փաստում է, որ վթարի պահին դիմումատուի ավտոմոբիլը չի եղել ապահովագրված:

<<Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին>> օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի <<ա>> կետի համաձայն՝ Ճանապարհային ոստիկանության ծառայողը պարտավոր է տրանսպորտային միջոցը կանգնեցնել, եթե **ակնհայտ** կամ տեխնիկական միջոցների օգտագործմամբ **երևում է, որ վարորդը խախտել է ճանապարհային երթևեկության կանոնների պահանջները**: Նույն հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ երթևեկության սահմանված արագության գերազանցման և տրանսպորտային միջոցների ապակիների լուսաթափանցելիության սահմանված չափի խախտումների համար պատասխանատվություն է առաջանում, երբ տվյալ խախտումը փաստարկված է համապատասխան տեխնիկական միջոցների կիրառմամբ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Ճանապարհային ոստիկանության վարչական իրավախախտման վերաբերյալ գործով 13.10.2020թ. կայացված ԱՖ502127 որոշումը թողնել անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հանձնելու օրվան հաջորդող օրը և կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:
3. Սույն որոշման օրինակն ուղարկել Բաբկեն Պողոսյանին և Ճանապարհային ոստիկանության ՃՊԾ 2-րդ սպայական գումարտակ:



Ե.Կարապետյան